Modex

# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

2023

# Բովանդակություն


**03**
Հիմնական փաստեր

**04**
Ներածություն

**05**
Ձեռնարկատիրությունը ՏՏ ոլորտում

**09**
ՏՏ ոլորտի վճարած հարկերը

**10**
Զբաղվածությունը ՏՏ ոլորտում

**15**
Ծրջանառությունը ՏՏ ոլորտում

**20**
ՏՏ ոլորտի ավելացված արժեքը

**21**
Արտադրողականությունը ՏՏ ոլորտում

**22**
Մեթոդաբանություն

# Հիմնական փաստեր 2023

**11,671** +46%
տնտեսավարող

**94.1%** ծրագրային ապահովման մշակում և հարակից գործունեություն

66.1%
**7,713**
ԱՁ

33.9%
**3,958**
ընկերություն

2023թ դեկ.

**33,980**
Վարձու աշխատող

**4,834**
Վարձու աշխատող չունեցող ԱՁ-ներ

**27.3%** օտարերկրացի վարձու աշխատողներ

**837** մլրդ Դ
Շրջանառություն

**22** մլն Դ
1 աշխատողի հաշվով թողարկում

**755** մլրդ Դ
Արտահանում

**717** մլրդ Դ
Ավելացված արժեք

veeam

Ամենախոշոր հարկատու

**Veeam Armenia** | **7** մլրդ Դ

SYNOPSYS

2023թ դեկ.

Ամենախոշոր գործատու

**Synopsis Armenia** | **1,179** աշխատող

**135** մլրդ Դ +51%
ՏՏ ոլորտի ընկերությունների վճարած հարկեր

**410** մլրդ Դ +36%
ՏՏ ոլորտում վճարված աշխատավարձերը

# Ներածություն

2022թ-ին ռուս-ուկրաինական պատերազմի պատճառով Ռուսաստանից բազմաթիվ ընկերությունների ու մասնագետների Հայաստան տեղափոխվելու արդյունքում ՀՀ տեղեկատվական տեխնոլոգիաների (ՏՏ) ոլորտի համայնապատկերը փոխվել է: Հայաստանի ՏՏ ոլորտի ներկա իրավիճակի վերաբերյալ համապարփակ պատկերացում կազմելու նպատակով **Մոդեքս** խորհրդատվական ընկերությունը իրականացրել է ՀՀ ՏՏ ոլորտի ուսումնասիրություն:

Ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից (ՊԵԿ) ձեռք բերված տվյալների հիման վրա:

Ուսումնասիրությունը բաղկացած է վեց բաժիններից, ներածությունից, ամփոփումից և մեթոդաբանությունից:

**Զեռնարկատիրությունը ՀՀ ՏՏ ոլորտում 2023թ-ին** բաժնում ներկայացվել են ՏՏ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների շարժընթացը 2022-2023թթ-ին, կառուցվածքը ըստ ենթաոլորտների, բաշխումն ըստ աշխատողների թվի, ոլորտում վճարված աշխատավարձերը:

**ՏՏ ոլորտի վճարած հարկերը բաժնում** ներկայացվել են ՏՏ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների վճարած հարկերը, բաշխումն ըստ ենթաոլորտների և խոշոր 20 հարկատուների ցանկն իրենց վճարած հարկերով 2022-2023թթ-ին:

**Զբաղվածությունը ՏՏ ոլորտում** բաժնում ներկայացվել են վարձու աշխատողների դինամիկան ըստ ամիսների 2022-2023թթ-ին, օտարերկրացի քաղաքացիների մասնաբաժինը նրանց կառուցվածքում, բաշխումն ըստ գործունեության տեսակների, ՌԴ քաղաքացիների շարժընթացը, ոլորտի խոշոր գործատուները:

**Շրջանառությունը ՏՏ ոլորտում** բաժնում ամփոփվել են ոլորտի իրացման շրջանառությունն ըստ ենթաոլորտների 2022-2023թթ-ին, բաշխումն ըստ տնտեսավարողների հարկման ռեժիմի, ՏՏ արտադրանքի և ծառայությունների արտահանումը 2023թ-ին, խոշոր 10 ընկերություններն ըստ իրացման շրջանառության:

**Ավելացված արժեքը ՏՏ ոլորտում** բաժնում ներկայացվել են ՏՏ ոլորտի գեներացված ավելացված արժեքի գնահատականը 2022-2023թթ-ին, մասնաբաժինը ՀՆԱ-ի կառուցվածքում:

**Արտադրողականությունը ՏՏ ոլորտում** բաժնում ներկայացվել են 1 աշխատողի հաշվով թողարկումը և ավելացված արժեքը Հայաստանում 2022-2023թթ-ին:

# Ձեռնարկատիրությունը SS ոլորտում 2023

### SS ոլորտի տնտեսավարող սուբյեկտների թիվը, 2022-2023թթ.




### SS ոլորտի բիզնես դեմոգրաֆիան, 2023թ




2022թ-ին SS ոլորտում գործել են **8,011** տնտեսավարող սուբյեկտ, որից տարեվերջի դրությամբ իրենց գործունեությունը շարունակել են միայն **4,964-ը:**

2023թ-ի ընթացքում SS ոլորտում գործունեություն են սկսել **3,905** տնտեսավարող, 782-ը՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է, 15-ը՝ լուծարվել կամ լուծարման գործընթացում են, 64-ը՝ հաշվառումից հանվել են, իսկ 2-ը՝ ճանաչվել սնանկ:

Ընդհանուր առմամբ, 2023թ-ի տարեվերջին SS ոլորտում գործել են 7,813 տնտեսավարող՝ **մոտ 1.6 անգամ** ավելի շատ, քան 2022թ-ի տարեվերջին:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսավարող սուբյեկտները (ԱՁ, ՍՊԸ և այլն), որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# ՏՏ ոլորտում ստեղծված և գործունեությունը դադարեցրած ընկերությունները 2023

## 2023թ-ին ՏՏ ոլորտում ստեղծված ձեռնարկություններն ըստ ենթաոլորտների




## 2023թ-ին ՏՏ ոլորտում գործունեությունը դադարեցրած ձեռնարկություններն ըստ ենթաոլորտների




Նշում՝ Դիտարկվել են այն տնտեսվարող սուբյեկտները (ԱՁ, ՍՊԸ և այլն), որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Ձեռնարկատիրությունը SS ոլորտում ըստ ենթաոլորտների

## SS ոլորտի տնտեսավարող սուբյեկտներն ըստ կազմակերպաիրավական տեսակի, 2022-2023թթ.




## SS ոլորտի տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ ենթաոլորտների, 2023թ




2023թ-ի ընթացքում SS ոլորտում գործունեություն իրականացրած **11,671** տնտեսավարող սուբյեկտների **66%-ը** հանդիսանում էին անհատ ձեռնարկատերերը:

2023թ-ի ընթացքում SS ոլորտում գործունեություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների **94.1%-ը** զբաղվել են ծրագրային ապահովման մշակմամբ և հարակից գործունեությամբ, **5.5%-ը՝** տվյալների մշակմամբ, վեբ-պորտալների հետ կապված և հարակից այլ գործունեությամբ:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսավարող սուբյեկտները, որոնք տվյալ տարվա ընթացքում գործունեություն են իրականացրել SS ոլորտում՝ անկախ տարեվերջին դրանց կարգավիճակից (գործող, գործունեությունը դադարեցրած, լուծարված և այլն):

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# ՏՏ ոլորտի ձեռնարկություններն ըստ աշխատողների թվի 2023

**ՏՏ ոլորտի տնտեսավարող սուբյեկտների բաշխումն ըստ վարձու աշխատողների թվի, 2023թ-ի դեկտեմբեր**




2023թ-ի դեկտեմբերի դրությամբ ՏՏ ոլորտում գործող **7,813** տնտեսավարող սուբյեկտներից (ԱՁ, ՍՊԸ և այլն) 1,609 ունեցել են 1-4 վարձու աշխատող, 964-ը ունեցել են 5-50 աշխատող, իսկ 250 և ավել աշխատող ունեցել են ընդամենը 17 ընկերություն:

Ընդ որում ամենախոշոր գործատու **17** ընկերություններից 6-ը ՌԴ-ից ռելոկացված ընկերություններ են:

2023թ-ի վերջին ՏՏ ոլորտում գործում էին վարձու աշխատող չունեցող **4,834** անհատ ձեռնարկատեր:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսավարող սուբյեկտները (ԱՁ, ՍՊԸ և այլն), որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտի վճարած հարկերը

## SS ոլորտի ընկերությունների վճարած հարկերը, 2022-2023թթ.




2023թ SS ոլորտի ընկերությունները վճարել են շուրջ **134 միլիարդ 594 միլիոն դրամ**, ինչը 51%-ով ավելի է նախորդ տարվանից:

## SS ոլորտի խոշոր հարկատուները, 2022-2023թթ.




Նշում՝ հարկերը հաշվարկվել են որպես պետբյուջե վճարված ընդհանուր գումարների և ԱԱՀ, ակցիզային հարկի մասով միասնական հաշիվ վերադարձված գումարների տարբերություն

SS ոլորտի ընկերությունները միասին 2023-ին ապահովել են ՊԵԿ-ի կողմից վերահսկվող հարկային եկամուտների և տուրքերի 6%-ը:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Զբաղվածությունը SS ոլորտում 2022-2023

**SS ոլորտի վարձու աշխատողների թվի և օտարերկրացիների մասնաբաժնի շարժընթացը, 2022-2023թթ.**




2023թ-ի տարեվերջի դրությամբ SS ոլորտում վարձու կամ պայմանագրային հիմունքներով աշխատողների թիվը եղել է **33,980**, ինչը 2022թ-ի տարեսկզբի համեմատ ավել է 12,992-ով կամ 61.9%-ով, ընդ որում՝ 61.9% աճի առնվազն* 44.2 տոկոսային կետը պայմանավորված է օտարերկրացիների, մասնավորապես, Ռուսաստանի քաղաքացիների ներհոսքով:

Արդյունքում, օտարերկրացիների մասնաբաժինը SS ոլորտի վարձու աշխատողների կառուցվածքում 2022թ-ի հունվարի 4.1%-ից հասել է 27.3%-ի 2023թ-ի դեկտեմբերին: Դիտարկվող ժամանակահատվածում այս ոլորտում ներգրավված Հայաստանի քաղաքացիների թիվը **աճել է շուրջ 3.7 հազարով**: 2022թ-ի տարեվերջին ոլորտում գործել են նաև վարձու աշխատող չունեցող 2,653 անհատ ձեռնարկատերեր, որոնց թիվը 2023թ-ի տարեվերջին հասել է **4,834**:

*Ենթադրաբար Ռուսաստանի քաղաքացիների մի մասը Հայաստան ժամանելուց հետո որոշ ժամանակ անց ընդունել է ՀՀ քաղաքացիություն

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտում աշխատող ՌԴ քաղաքացիների թվի շարժընթացը 2022-2023

### ՌԴ քաղաքացիների թվի շարժընթացը, 2022-2023թթ.




### ՌԴ քաղաքացիների քանակով առաջատար ընկերությունները, 2023թ-ի դեկտեմբեր




2023թ-ի տարեվերջի դրությամբ ոլորտում աշխատող օտարերկրացիների **89%-ը** եղել են Ռուսաստանի քաղաքացիներ, 3%-ը՝ Իրանի, 2%-ը՝ Բելառուսի: Հարկ է նշել, որ SS ոլորտի ՌԴ քաղաքացի աշխատողների թիվը իր առավելագույնին է հասել 2023թ-ի հունիսին՝ 8,613, որից հետո դանդաղ տեմպերով նվազել է հասնելով 8,262-ի տարեվերջին:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Ռուսաստանի քաղաքացիների մեծամասնությունն աշխատում է ռելոկացված ընկերություններում, ընդ որում՝ այդ ընկերություններից շատերը, որպես կանոն, քիչ են ներգրավում Հայաստանի քաղաքացիներին և գործում են Հայաստանի SS համայնքից մեկուսի:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Զբաղվածությունը SS ոլորտում ըստ ենթաոլորտների 2022-2023

**SS ոլորտի վարձու աշխատողների թիվն ըստ ենթաոլորտների 2022 և 2023 թվականներին, տարեվերջի դրությամբ**




2023թ-ի դեկտեմբերի դրությամբ SS ոլորտում վարձու աշխատողների շուրջ **87.3%-ը** զբաղվում էր ծրագրային ապահովման մշակմամբ և հարակից գործունեությամբ, **11.8%-ը** աշխատում էր տվյալների մշակման և հարակից գործունեության, իսկ **0.9%-ը՝** համակարգիչների և էլեկտրոնային սարքավորանքի արտադրության ենթաոլորտներում:

Ընդ որում, 2023թ-ի դեկտեմբերին 2022-ի տարեվերջի համեմատ ծրագրային ապահովման մշակման, խորհրդատվության և համակարգչային ծրագրերի հրատարակության ոլորտներում վարձու աշխատողների թիվն ավելացել է 1,112-ով կամ **4%-ով,** տվյալների մշակման, ցանցում տեղեկատվության տեղաբաշխման, վեբ-պորտալների հետ կապված և հարակից գործունեությամբ զբաղվող վարձու աշխատողների թիվը աճել է **890-ով** իսկ համակարգիչների, էլեկտրոնային և օպտիկական սարքավորանքի արտադրության ոլորտում վարձու աշխատողների թիվը աճել է՝ **177-ից հասնելով 311-ի**:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտում վճարված աշխատավարձերը 2022-2023

### SS ոլորտում վճարված աշխատավարձերը և դրանց հավասարեցված վճարումները, 2022-2023թթ.




### SS ոլորտում վճար աշխատավարձերը և դրանց հավասարեցված վճարումները ըստ ենթաոլորտների, 2023




2023թ-ի SS ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների կողմից վճարվել են **410 միլիարդ դրամի** չափով աշխատավարձեր և դրանց հավասարեցված վճարներ, ինչը 36%-ով կամ 107 միլիարդ 454 միլիոն դրամով ավել է, քան նախորդ տարի:

SS ոլորտում վճարված աշխատավարձերի **95%**-ը կամ 390 միլիարդ դրամ բաժին է հասել ծրագրային ապահովման մշակում և հարակից գործունեություն ենթաոլորտին:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսավարող սուբյեկտները, որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS խոշոր գործատուները 2023

## SS ոլորտի 20 խոշոր գործատուներն ըստ աշխատողների թվի 2022 և 2023 թվականներին, տարեվերջի դրությամբ




2023թ-ի տարեվերջի դրությամբ աշխատողների թվով առաջատարը **Synopsis Armenia** ընկերությունն էր՝ 1,179 աշխատողով:

Խոշոր 20 ընկերությունները միասին ապահովել են SS ոլորտի զբաղվածության մոտ **27%-ը:**

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

## Աշխատողների թվով ամենամեծ աճ/անկում գրանցած ընկերությունները 2023թ-ի տարվերջին 2022թ-ի տարեվերջի համեմատ




Աշխատողների թվով ամենամեծ աճ արձանագրած 5 ընկերություններից 3-ում (Tinkoff, Y. E. Hub Armenia և Saber Interactive Armenia) աշխատողների գերակշիռ մասը **ՌԴ** քաղաքացիներ են:

# Շրջանառությունը SS ոլորտում 2022-2023

**SS ոլորտի իրացման շրջանառությունը ընթացիկ գներով, 2022-2023թթ**




2023թ-ին **SS ոլորտի համախառն թողարկումը** ընթացիկ գներով կազմել է մոտ 837 միլիարդ դրամ՝ 252 միլիարդ դրամով ավել, քան նախորդ տարի: **SS ոլորտի մաքուր թողարկումը** շուրջ 32 միլիարդ դրամով ավելի շատ է եղել, քան համախառն թողարկումը:

Ընդ որում 2023թ-ին SS ոլորտի համախառն թողարկման կեսը բաժին է հասել ընդամենը **71 ընկերության**:

2023-ին համախառն թողարկումը **78.5%-ը կամ 657 միլիարդ դրամ բաժին է ընկել ծրագրային ապահովման մշակման** ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին (J62.01.0): Ընդ որում այս ոլորտի իրացման շրջանառությունը նախորդ տարվա համեմատ աճել է 44.4%-ով կամ 202 միլիարդ դրամով:

Նշում՝ Համախառն թողարկում - դիտարկվել են բոլոր այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեության հիմնական ոլորտներն են եղել՝ J58.2, J62, J63.1, C26 ոլորտները:
Մաքուր թողարկում - դիտարկվել են բոլոր այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեությունն են ծավալել հետևյալ ոլորտներից որևէ մեկում՝ J58.2, J62, J63.1, C26, անկախ նրանից թե ինչքան է եղել տվյալ ոլորտի մասնաբաժինը շրջանառության կառուցվածքում:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Շրջանառությունը ՏՏ ոլորտում ըստ հարկման ռեժիմի

**ՏՏ ոլորտում գործունեություն իրականացրած ընկերությունների իրացման շրջանառությունն ըստ հարկման ռեժիմի 2023թ-ին**




2023թ-ին ՏՏ ոլորտի իրացման շրջանառության **91.1%-ը** կամ 763 միլիարդ դրամ գեներացվել է **ԱԱՀ վճարողների** կողմից, ընդ որում ԱԱՀ վճարողների կողմից գեներացված շրջանառության **շուրջ կեսը բաժին է հասել ընդամենը 53 ընկերության**, որոնց մեծ մասը զբաղվել է ծրագրային ապահովման մշակմամբ: Նշենք, որ ԱԱՀ հարկման ռեժիմում գործել է ավելի քան 4 հազար ընկերություն:

**Շրջանառության հարկ վճարողներին** բաժին է ընկել ոլորտի թողարկման **8.7%-ի** կամ 73 միլիարդ դրամի համար: Այս հարկման ռեժիմում 2023թ-ին գործել են **5,731 տնտեսավարող սուբյեկտ՝** 1,123-ով կամ 24.4%-ով ավել, քան 2022-ին:

2023թ-ին ՏՏ ոլորտում **միկրոձեռնարկատերերի** իրացման շրջանառությունը կազմել է 1 միլիարդ 531 միլիոն դրամ կամ ոլորտի թողարկման 0.2%-ը: 2023թ–ին ՏՏ ոլորտում գործունեություն են իրականացրել **375** միկրոձեռնարկատերեր:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտի արտահանումը 2023

## SS ոլորտի տնտեսավարող սուբյեկտների շրջանառությունը ներքին և արտաքին շուկաներում, 2023թ




2023թ-ին SS ոլորտի շրջանառության **87%-ը** կամ 755 միլիարդ դրամ **իրացվել է արտաքին շուկաներում**, իսկ 13%-ը կամ 114 միլիարդ դրամ՝ ներքին շուկայում:

Ընդհանուր առմամբ, ԱԱՀ վճարող **3,210 տնտեսավարող սուբյեկտ** 2023թ-ի ընթացքում արտահանել է SS արտադրանք կամ ծառայություն, որոնցից 56-ի դեպքում SS ոլորտը հանդիսանում էր ոչ հիմնական գործունեություն (ընդհանուր շրջանառության մեջ SS ոլորտի շրջանառությունը 50% կամ ավելի քիչ էր):

Նշում՝ Դիտարկվել են բոլոր տնտեսվարող սուբյեկտները, որոնք գործունեություն են իրականացրել J58.2, J62, J63.1, C26 ոլորտներում, անկախ նրանց շրջանառության կառուցվածքում այդ ոլորտների մասնաբաժնից:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Շրջանառությունը ՏՏ ոլորտում ըստ ենթաոլորտների

**ՏՏ ոլորտում գործունեություն իրականացրած ընկերությունների իրացման շրջանառությունն ըստ ենթաոլորտների, 2023թ**




2023թ-ին **ՏՏ ոլորտի համախառն շրջանառության 93.2%-ը կամ 780 միլիարդ դրամ** գեներացվել է ծրագրային ապահովման մշակման, խորհրդատվության և համակարգչային ծրագրերի հրատարակության ոլորտներում, ընդ որում այս ոլորտներում իրացման շրջանառության **շուրջ կեսը բաժին է հասել ընդամենը 60 ընկերության:**

Հարկ է նշել, որ ըստ Վիճակագրական կոմիտեի տվյալների այս ոլորտի համախառն շրջանառությունը 2023թ-ին կազմել է 450 միլիարդ դրամ, ինչը շուրջ 387 միլիարդով քիչ է, քան ՊԵԿ-ի տվյալներով: Այս տարբերությունը վկայում է այն մասին, որ ոլորտի բազմաթիվ ընկերությունների տվյալներ ներառված չեն Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարության վարչական ռեգիստրում, որից էլ տվյալներն ստանում է Վիճակագրական կոմիտեն:

ՏՏ ոլորտի համախառն շրջանառության 6.5%-ը կամ 54 միլիարդ դրամ գեներացվել է տվյալների մշակման, ցանցում տեղեկատվության տեղաբաշխման, վեբ-պորտալների հետ կապված և հարակից գործունեության ոլորտում, իսկ 0.4%-ը՝ համակարգիչների և էլեկտրոնային սարքավորանքի արտադրության ոլորտում:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտի **խոշոր ընկերություններն** ըստ շրջանառության

**SS 10 խոշոր ընկերություններն ըստ իրացման շրջանառության ընթացիկ գներով, 2022-2023թթ.**




2023թ-ին Հայաստանում գրանցված ամենախոշոր SS ընկերության շրջանառությունը եղել է շուրջ **29.4 միլիարդ դրամ** նախորդ տարվա համեմատ աճելով 28.6%-ով:

Ընդհանուր առմամբ, 2023թ-ին նախորդ տարվա համեմատ 10-յակում հայտնված ընկերությունների իրացման շրջանառությունն աճել է **34%-ով**, ընդ որում՝ երկուսի դեպքում արձանագրվել է եռանիշ հավելաճ՝ 682% և 158%:

2022թ-ին գործած և 2023թ-ին իրացման շրջանառություն հայտարարագրած SS ոլորտի տնտեսավարող սուբյեկտների **ավելի քան 66%-ի** իրացման շրջանառությունը 2023թ-ին աճել է, ինչը ևս անուղղակիորեն վկայում է ոլորտի դրական զարգացումների մասին:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# SS ոլորտի ավելացված արժեքը

**SS ոլորտի գեներացրած ավելացված արժեքն ընթացիկ գներով, 2022-2023թթ.**




Նշում՝ Համախառն ոլորտ - դիտարկվել են բոլոր այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեության հիմնական ոլորտներն են եղել՝ J58.2, J62, J63.1, C26 ոլորտները: Մաքուր ոլորտ - դիտարկվել են բոլոր այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց գործունեություն են ծավալել հետևյալ ոլորտներից որևէ մեկում՝ J58.2, J62, J63.1, C26, անկախ նրանից թե ինչքան է եղել տվյալ ոլորտի մասնաբաժինը շրջանառության կառուցվածքում:

Աղբյուր՝ սեփական հաշվարկ ՀՀ ՊԵԿ-ից և ՀՀ ՎԿ-ից ստացված տվյալների հիման վրա

2023թ-ին **համախառն SS ոլորտի ավելացված արժեքը** ընթացիկ գներով եղել է շուրջ 717 միլիարդ դրամ՝ 217 միլիարդ դրամով ավել, քան նախորդ տարի, իսկ ոլորտի իրական աճը եղել է շուրջ 43.8%: Հարկ է նշել, որ **մաքուր SS ոլորտի ավելացված արժեքը** մոտ 37 միլիարդ դրամով ավելի շատ է եղել, քան համախառն SS ոլորտինը:

2023թ-ի տվյալներով SS ոլորտում ավելացված արժեքի 99.9%-ը բաժին է ընկել SS ծառայություններին, իսկ 0.1%-ը SS արտադրությանը:

Պայմանավորված այն հանգամանքով, որ 2022-2023թթ.-ին SS ոլորտում հիմնադրվել են բազմաթիվ ընկերություններ, բայց ընթացակարգային պատճառներով հաշվետու տարում չեն ներառվել վարչական ռեգիստրում, ոլորտի թողարկումը, հետևաբար նաև **ավելացված արժեքը զգալիորեն թերի է հաշվառվել**: Մեր գնահատականներով, **2022թ-ին SS ոլորտի ճշգրտված ավելացված արժեքի մասնաբաժինը ճշգրտված ՀՆԱ-ի կառուցվածքում եղել է շուրջ 6.2%, իսկ 2023թ-ին շուրջ 7.6%:**

# Արտադրողականությունը ՏՏ ոլորտում

## ՏՏ ոլորտում արտադրողականությունն ընթացիկ գներով, 2023թ




2023թ-ին Հայաստանում ՏՏ ոլորտի թողարկումը մեկ աշխատողի հաշվով կազմել է **21 միլիոն 659 հազար դրամ՝** 9.4%-ով ավել, քան 2022-ին:

Համաձայն մեր հաշվարկների, ոլորտի մեկ աշխատող միջինում 2023թ-ին գեներացրել է **18 միլիոն 538 հազար դրամի** չափով ավելացված արժեք:

Նշում՝ ներկայացված են այն տնտեսվարող սուբյեկտները, որոնց շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

Աղբյուր՝ ՀՀ ՊԵԿ

# Մեթոդաբանություն

### Տվյալները

Տվյալ ուսումնասիրությունը իրականացվել է ՀՀ ՊԵԿ-ի և Վիճակագրական կոմիտեի տվյալների հիման վրա: Հարկ վճարողների իրացման շրջանառության և վճարած աշխատավարձերի վերաբերյալ տվյալները տրամադրվել են անվանազերծված տարբերակով:

### Ոլորտի սահմանումը

Սույն ուսումնասիրության շրջանակում SS ոլորտ ասելով հասկանում ենք ՏԳՏԴ խմբ. 2-ի 5-նիշ դասակարգմամբ հետևյալ գործունեության տեսակները՝ C26.11.0, C26.12.0, C26.20.0, C26.30.0, C26.40.0, C26.80.0, J58.21.0, J58.29.0, J62.01.0, J62.02.1, J62.02.9, J62.03.0, J62.09.0, J63.11.1, J63.11.2, J63.11.3, J63.12.0: Տվյալները ամփոփ ներկայացնելու նպատակով գործունեության տեսակները խմբավորվել են հետևյալ կերպ՝ Ծրագրային ապահովման մշակում և հարակից գործունեություն (J62, J58), Տվյալների մշակում և հարակից գործունեություն (J63) և Համակարգիչների, էլեկտրոնային սարքավորանքի արտադրություն (C26):

### Այլ սահմանումներ

Տնտեսավարող սուբյեկտ ասելով հասկանում ենք ոլորտում գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերին և ընկերություններին: Ընդ որում՝ SS ոլորտը հիմնական է համարվել բոլոր այն տնտեսավարողների համար, որոնց իրացման շրջանառության կառուցվածքում հետևյալ գործունեության տեսակները ունեցել են ամենամեծ մասնաբաժինը՝ J58.2, J62, J63.1, C26:

**Համախառն թողարկում** ասելով հասկանում ենք բոլոր այն տնտեսավարող սուբյեկտների իրացման շրջանառությունը, որոնց գործունեության հիմնական ենթաոլորտներն են եղել տնտեսական գործունեության հետևյալ տեսակները J58.2, J62, J63.1, C26:

**Մաքուր թողարկում** ասելով հասկանում ենք բոլոր այն տնտեսավարող սուբյեկտները իրացման շրջանառությունը, որը վերագրելի է հետևյալ ոլորտներից որևէ մեկին՝ J58.2, J62, J63.1, C26, անկախ նրանից թե ինչքան է եղել տվյալ ոլորտի մասնաբաժինը տվյալ տնտեսավարող սուբյեկտի շրջանառության կառուցվածքում:

### Հիմնական հաշվարկների մոտեցումները

Ոլորտի ավելացված արժեքը հաշվարկելու համար օգտագործվել են SS ոլորտում գործունեություն իրականացրած տնտեսավարող սուբյեկտների իրացման շրջանառության վերաբերյալ տվյալները և թողարկում/միջանկյալ սպառում գործակիցները:

Արտահանումը հաշվարկելու համար ՊԵԿ-ի տվյալների հիման վրա գնահատվել է ԱԱՀ վճարողների արտահանում/ իրացման շրջանառություն գործակիցը և կիրառվել է նաև այլ հարկային ռեժիմներում աշխատող տնտեսավարող սուբյեկտների վրա, ընդ որում՝ դիտարկվել է մաքուր թողարկումը:

Modex

Մոդեքսը խորհրդատվական ընկերություն է, որը մատուցում է ծառայություններ միջազգային կազմակերպություններին, մասնավոր և պետական հատվածի հաճախորդներին:

Մասնավոր կազմակերպությունների համար Մոդեքս խորհրդատվական ընկերությունը առաջարկում է ծառայությունների լայն շրջանակ, ներառյալ ներդրումային ծրագրի ֆինանսական մոդելի պատրաստում, իրագործելիության ուսումնասիրություն, բիզնես պլանի մշակում, շուկայի ուսումնասիրություն և այլն:

Հանրային ոլորտի կազմակերպություններին Մոդեքսը օգնում է արդյունավետ քաղաքականությունների մշակման, հանրային ֆինանսների կառավարման, համապարփակ սոցիալ-տնտեսական ուսումնասիրությունների, ոլորտային վերլուծությունների իրականացման գործում:

Բացի մասնավոր և հանրային հատվածի հաճախորդներին ծառայություններ մատուցելուց, Մոդեքսը նաև խորհդատվական և հետազոտական ծրագրեր է իրականացնում միջազգային կազմակերպությունների համար:

Մոդեքս խորհրդատվական ընկերությունը հիմնադրվել է 2017թ-ին:

**Modex խորհրդատվական ընկերություն**
Հասցե՝ Երևան, 0001, Մոսկովյան 3/1
Կայք՝ www.modex.am
Էլ. փոստ՝ info@modex.am
Հեռախոս՝ +374 99 041168